Դաս 39. «Սասունցի Դավիթ» էպոսի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Սասուն

(ավանդապատում)

Տալվորիկցի Միգոյի ու Պետրոյի փան գերաններից մեկը, ճնշվելով հողի ծանրությունից, կախ է ընկնում օդում: Մոտիկ գտնվողները սարսափահար գոռում են. «Սյո՛ւն բերեք,սյուն»: Մինչև սյան բերելը,եղբայրներից մեկը, որը ներկաների մեջ ամենաբարձրահասակն էր, տեղից վեր ցատկելով՝ ձեռքը դեմ է անում օդում կախված գերանին և ասում է. «Հայդա՛, ես մսա սուն» (մսե սյուն): Բոլորը միաբերան կատակելով ձայնում են. «Մգրոն մսա սուն է, մսասուն...»: Դրանից հետո այդ գավառը կոչվում է Մսա-սուն, որը հետո բերանից- բերան դառնում է Սասուն: